ՓԱՌՔ ԲԵԶ, ՀԱՅԱՍՏԱՆ, ԴՈՒ ՎԵՐԱԾՆՎԱԾ ՀԱՅՐԵՆԻՔ ՀԱՅՈՑ

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք

ԳՅՈՒՂԱՏՏԵՏ

ՕՐԳԱՆ «ՊԱՏՎՈ ՆՇԱՆ» ՇՔԱՆՇԱՆԱԿԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՌԵԿՏՈՐԱՏԻ, ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ, ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԵՎ ԼԿԵՄ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ
«ГЮГАТНТЕС» — ОРГАН РЕКТОРАТА, ПАРТИЙНОГО, ПРОФСОЮЗНОГО И КОМСОМОЛЬСКОГО КОМИТЕТОВ
АРМЯНСКОГО ОРДЕНА «ЗНАК ПОЧЕТА» СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННОГО ИНСТИТУТА

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1958 Թ. ՄԱՅԻՍԻ 29-ԻՑ ● № 26 (592) ● 29 ՆՈՅԵՄԲԵՐԻ, 1980 Թ. ՇԱԲԱԹ ● ԳԻՆԸ 2 ԿՈՊ.

1920

ՈՂՋՈՒՆՈՒՄ ԵՄ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ՃՆՇՈՒՄԻՑ Ա-ԶԱՏԱԳՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ:

Վ. Ի. ԼԵՆԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ, ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒ ՀՈԳԵՎՈՐ ԿՅԱՆՔԻ ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ԾԱՂԿՈՒՄԸ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ, ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԼԵՆԻՆՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱՀԱՍՏԱՏ ՈՒԺԻ ՎԱՌ ԱՊԱՑՈՒՅՑՆ ԵՆ:

Լ. Ի. ԲՐԵԺՆԵՎ

1980

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ, ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՑ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆԸ, ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ

Սովետական Միության կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեն, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությունը և ՍՍՀՄ Մինիստրների խորհուրդը Հայաստանի բանվորներին, կոլտնտեսականներին, մտավորականությանը, բոլոր աշխատավորներին ջերմորեն և ի սրտե շնորհավորում են մեծ տոնի՝ Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության և Հայաստանի կոմունիստական կուսակցության 60-ամյակի առթիվ։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը արմատական շրջադարձ նշանավորեց հայ ժողովրդի ճակատագրում։ Նա հայ ժողովրդին բերեց իսկական սոցիալական և ազգային ազատություն, բացեց սոցիալիստական զարգացման լայն ասպարեզ, ցույց տվեց նոր, երջանիկ կյանքի ուղին։

Սովետական Միության կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, հենվելով ՍՍՀՄ ժողովուրդների, և ամենից առաջ ռուս մեծ ժողովրդի անշահախնդիր եղբայրական օգնության վրա, Սովետական Հայաստանը անցած վաթսուն տարում ակնառու հաջողությունների հասավ տնտեսական և կուլտուրական շինարարության մեջ։ Հայկական ՍՍՀ-ն արժանի ավանդ է մուծում բազմազգ սովետական պետության հզորացման, մեր մեծ հայրենիքի տնտեսական ու պաշտպանական հզորության ամրապնդման մեջ։

Հայրենական մեծ պատերազմի ահեղ տարիներին Սովետական Հայաստանի որդիները ու դուստրերը մեր սոցիալիստական հայրենիքի բոլոր ժողովուրդների հետ միասին մարտական շարքում անձնվիրաբար կռվում էին ֆաշիստական գավթիչների դեմ և այդ պայքարում ցույց տվեցին արիության, խիզախության և հերոսության օրինակներ։

Սովետական Հայաստանն այսօր մի հանրապետություն է բարձր զարգացած էկոնոմիկայով, որը երկրի ժողովրդատնտեսական միասնական կոմպլեքսի կարևոր բաղկացուցիչ մասն է կազմում։ Հայկական ՍՍՀ-ի դեմքն են բնորոշում ատոմային էներգետիկան, մետալուրգիական, էլեկտրատեխնիկական, էլեկտրոնային, ռադիոտեխնիկական, սարքաշինական, քիմիական, թեթև և սննդի արդյունաբերությունը։ Որակական խոր վերափոխումներ են կատարվել գյուղատնտեսության մեջ։ Աննախընթաց ծաղկման են հասել գիտությունը և հայ ժողովրդի հին, ինքնատիպ, ձևով ազգային և բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրան։ Տարեցտարի բարձրանում է աշխատավորների նյութական բարեկեցությունը։ Հանրապետությունում լայն հնարավորություններ են ստեղծվել աշխատավոր մարդկանց համակողմանի, ներդաշնակ զարգացման համար, պետության ու հասարակության գործերի կառավարմանը նրանց ակտիվ մասնակցության համար։ Այս ամենը վառ կերպով վկայում է սոցիալիզմի ստեղծարար մեծ ուժը, ՍՄԿԿ-ի լենինյան ազգային քաղաքականության հաղթանակը, ՍՍՀՄ բոլոր ազգերի և ազգությունների համակողմանի զարգացման նկատմամբ կուսակցության և կառավարության մշտական հոգատարությունը։

Հանրապետության աշխատավորների նվաճումները անխզելիորեն կապված են Հայաստանի կոմունիստական կուսակցության՝ ՍՄԿԿ-ի մարտական և փորձված ղեկատներից մեկի գործունեության հետ։ Իր բովանդակ վաթսունամյա պատմության ընթացքում Հայաստանի կոմկուսը հանդես է գալիս որպես մասսաների քաղաքական ղեկավար ու կազմակերպիչ։ Նա աշխատավորներին անդուլ կերպով դաստիարակում է մարքսիզմ-լենինիզմի, սովետական հայրենասիրության և պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարներին հավատարմության ոգով։

Հանրապետության և Հայաստանի կոմկուսի հոբելյանը նշվում է ՍՄԿԿ 26-րդ համագումարի նախապատրաստության նշանակալի օրերին։ Հայաստանի կոմունիստները, բոլոր աշխատավորները ակտիվորեն սոցիալիստական մրցության մեջ են մտել ի պատիվ կուսակցության առաջիկա համագումարի, հաջողությամբ ավարտում են տասներորդ հնգամյակի առաջադրանքները, անձնվիրաբար պայքարում հանրային արտադրության արդյունավետության և աշխատանքի որակի հետագա բարձրացման վերաբերյալ ՍՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ ընկ. Լ. Ի. Բրեժնևի ցուցումների կենսագործման համար։

Սովետական Միության կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեն, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությունը, ՍՍՀՄ Մինիստրների խորհուրդը հատուկ վստահություն են հայտնում, որ Հայկական ՍՍՀ-ի աշխատավորները կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, այսուհետև ևս ըստ ամենայնի կմշրաքանդեն մեր մեծ հայրենիքի հզորությունը, Սովետական Միության ժողովուրդների բարեկամությունն ու եղբայրությունը, նոր հաջողությունների կհասնեն կոմունիստական շինարարության ասպարեզում։

Կեցցե՛ Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետությունը։

Կեցցե՛ Հայաստանի կոմունիստական կուսակցությունը՝ ՍՄԿԿ-ի մարտական չոկատը։

Կեցցե՛ Սովետական Միության լենինյան կոմունիստական կուսակցությունը՝ սովետական հասարակության ղեկավար և ուղղություն տվող ուժը։

ՍՄԿԿ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՑ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

ՍՍՀՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ԱՂԻՍԻԱ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Նամակ ատ Հայաստան

... Երկի՛ր Հայաստան,
Ես բարձրացել եմ քո փառքի թևով,
Քո կորուստներով եղել արնաքամ,
Աղոթել եմ ես քո մայրերի հետ,
Քո վերքերի մեջ կսկիծ եմ եղել,
Ծնունդներիդ մեջ՝ բերկրություն ·
մի պարզ։
Հինգ հազար տարի
Քո տառապանքի հետ եմ ես եղել։
Եվ այս ամենը ինչպե՞ս բացատրել
Այն մարդկանց, որոնք
Ինձ հարց են տալիս.
«Հայաստանը քեզ դո՞ւր եկավ
արդյոք»։
Ու ես այդ մարդկանց ուզում եմ
ասել.
— Ես Հայաստանը ապրում եմ,
մարդիկ,
Ապրում եմ նրա հնագույն մաշկով,
Բույրով մենավոր
Եվ զգում նրան իմ արմատներով...
Ես չգնացի նրան տեսնելու ու
հավանելու,
Գնացի այնտեղ նորից ծնվելու
Եվ որոնելու լույսն իմ նախնական,
Եվ սկսելու իմ զրո դարից։
Դու, որ ինձ գիտես
Եվ հասկանում ես իմ հիշը անգամ,
Գիտես, թե որքան դժվարանում եմ
Քո մասին խոսել
Աշխարհիկ լեզվով,—
Մեր հանդիպումը
Ամենավերին
Երկինքներում է,
Որտեղ խոսում են,
Սակայն չեն զգում բայերի կարիք
Եվ դրա համար
Ես իմ լռության աղոթքներով եմ
Միշտ քեզ ողջունում,
Իմ ինքնապատկեր։
Ու քեզ օրհնելով,
Ես ինձ եմ օրհնում,
Քեզ վերապրելով,
Վերապրում եմ ինձ,
Եվ ճի՛չս, ճի՛չս
Այդ դու ես, որ կաս,
Հայրենի իմ հող
Եվ իմ դրոշակ՝
Երկի՛ր Հայաստան։

ՆԿԱՐՆԵՐՈՒՄ.— Գառնիի տաճար, Սասունցի Դավթի արձան և Մատենադարանի շենք։

ԱՅՆՏԵՂ... ՈՒՐ ԼՓՎԱԾ Ե՞Ն ՀԱՅՈՑ ՄԱՍՈՒՆՔՆԵՐԸ

... Մեխենաև շարունակում էր շարժվել Անիի սովետական տետրասույթյան տարածքով։ Մինչև պետական սահմանը մնում էր մի բանի հարյուր մետր։ Ոլորապտույտ ու բարբառոտ ավտոճանապարհը ձգվում էր անծիր դաշտերի միջով։ Մեխենաև ստիճանաբար դանդաղեցրեց ընթացքն ու կանգ առավ։ Ներևում՝ խոր ձորերով անցնում էր Ախուրյան գետը, որը բաժանում էր այս ափը՝ մյուսից։ Սահմանից այն կողմ, գետի ափին, Անի բաղաքի ավերակներն են։

— Մի՞թե հավատալ, որ հեռվում է տեղի ունեցել,— հարցնում էի ինքս ինձ,— մի՞թե հավատալ, որ սեփական աչքերով եմ տեսնում Անին...

ՄԵՆԱՎՈՐ ԱՆԻ... ժամանակն այստեղ լռեցնել է ավել ամեն ինչ։ Քարերն էլ են հոգնել մենությունից, ոչ ոք հետաց այցի չի գնում։ Դարեր առաջ Անին հարյուր հազար բնակիչ է ունեցել, եղել արհեստների ու արվեստների ծաղկուն և խոշորագույն կենտրոն...

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԱՆԻ...

Տեսնես քանի՞ տարի հայի ոտք չի տեսել Անիի դարավոր հողը...

Եվ մի՞թե պիտի մեռնի միջնադարի հրաշակերտ այս բաղաքը՝ առանց հետք թողնելու ուրիշ ժողովուրդների արվեստի ու հարատարպետության վրա...

... Լռություն է իշխում մենավոր այս բաղաքի ավերակներին... Ախ քարերը շատ են հոգնել մենավոր բաղաքում, ախ տաճարներն ու եկեղեցիները որքան մնան անտեր, անշոշափ ու անբռնելի, որքան հայհոյեն մոտիկին ու այրվեն հրաձց կարոտով։ Օ՜հ, սիրտս կրծկըվում, արյունահամ է լինում, որքան հայում, այնքան ավելի եմ խեղդանում։ Ինչպե՞ս է անցնելու այս գիշերը, ինչպե՞ս պիտի հետանամ այստեղից, ուրեմն էլ չե՞մ տեսնելու Անին... Երանի բոշուններին ու բզեզներին, որ անարգել թռչում, անցնում են սահմանը։ Ափսոս, երանի ոչինչ չեն հասկանում։ Դուն ես դառնալիս իրենց հետ բերեն հիշատակ։

ԱՅՆՏԵՂ... ՈՒՐ ԼՓՎԱԾ Ե՞Ն ՀԱՅՈՑ ՄԱՍՈՒՆՔՆԵՐԸ

Եվ մի՞թե պիտի մեռնի միջնադարի հրաշակերտ այս բաղաքը՝ առանց հետք թողնելու ուրիշ ժողովուրդների արվեստի ու հարատարպետության վրա...

... Լռություն է իշխում մենավոր այս բաղաքի ավերակներին... Ախ քարերը շատ են հոգնել մենավոր բաղաքում, ախ տաճարներն ու եկեղեցիները որքան մնան անտեր, անշոշափ ու անբռնելի, որքան հայհոյեն մոտիկին ու այրվեն հրաձց կարոտով։ Օ՜հ, սիրտս կրծկըվում, արյունահամ է լինում, որքան հայում, այնքան ավելի եմ խեղդանում։ Ինչպե՞ս է անցնելու այս գիշերը, ինչպե՞ս պիտի հետանամ այստեղից, ուրեմն էլ չե՞մ տեսնելու Անին... Երանի բոշուններին ու բզեզներին, որ անարգել թռչում, անցնում են սահմանը։ Ափսոս, երանի ոչինչ չեն հասկանում։ Դուն ես դառնալիս իրենց հետ բերեն հիշատակ։

ԱՐՑՈՒՆՈՑ ՈՒ ԱՐՑՈՒՆՔՈՑ Ա-ՆԻ... Երանի չտեսնեի Ֆո հետաց այցի չի գնում։ Դարեր առաջ Անին հարյուր հազար բնակիչ է ունեցել, եղել արհեստների ու արվեստների ծաղկուն և խոշորագույն կենտրոն...

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԱՆԻ...

Տեսնես քանի՞ տարի հայի ոտք չի տեսել Անիի դարավոր հողը...

Եվ մի՞թե պիտի մեռնի միջնադարի հրաշակերտ այս բաղաքը՝ առանց հետք թողնելու ուրիշ ժողովուրդների արվեստի ու հարատարպետության վրա...

... Լռություն է իշխում մենավոր այս բաղաքի ավերակներին... Ախ քարերը շատ են հոգնել մենավոր բաղաքում, ախ տաճարներն ու եկեղեցիները որքան մնան անտեր, անշոշափ ու անբռնելի, որքան հայհոյեն մոտիկին ու այրվեն հրաձց կարոտով։ Օ՜հ, սիրտս կրծկըվում, արյունահամ է լինում, որքան հայում, այնքան ավելի եմ խեղդանում։ Ինչպե՞ս է անցնելու այս գիշերը, ինչպե՞ս պիտի հետանամ այստեղից, ուրեմն էլ չե՞մ տեսնելու Անին... Երանի բոշուններին ու բզեզներին, որ անարգել թռչում, անցնում են սահմանը։ Ափսոս, երանի ոչինչ չեն հասկանում։ Դուն ես դառնալիս իրենց հետ բերեն հիշատակ։

ԱՐՑՈՒՆՈՑ ՈՒ ԱՐՑՈՒՆՔՈՑ Ա-ՆԻ... Երանի չտեսնեի Ֆո հետաց այցի չի գնում։ Դարեր առաջ Անին հարյուր հազար բնակիչ է ունեցել, եղել արհեստների ու արվեստների ծաղկուն և խոշորագույն կենտրոն...

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԱՆԻ...

Տեսնես քանի՞ տարի հայի ոտք չի տեսել Անիի դարավոր հողը...

Եվ մի՞թե պիտի մեռնի միջնադարի հրաշակերտ այս բաղաքը՝ առանց հետք թողնելու ուրիշ ժողովուրդների արվեստի ու հարատարպետության վրա...

... Լռություն է իշխում մենավոր այս բաղաքի ավերակներին... Ախ քարերը շատ են հոգնել մենավոր բաղաքում, ախ տաճարներն ու եկեղեցիները որքան մնան անտեր, անշոշափ ու անբռնելի, որքան հայհոյեն մոտիկին ու այրվեն հրաձց կարոտով։ Օ՜հ, սիրտս կրծկըվում, արյունահամ է լինում, որքան հայում, այնքան ավելի եմ խեղդանում։ Ինչպե՞ս է անցնելու այս գիշերը, ինչպե՞ս պիտի հետանամ այստեղից, ուրեմն էլ չե՞մ տեսնելու Անին... Երանի բոշուններին ու բզեզներին, որ անարգել թռչում, անցնում են սահմանը։ Ափսոս, երանի ոչինչ չեն հասկանում։ Դուն ես դառնալիս իրենց հետ բերեն հիշատակ։

ԿԱՄ ՄԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ՀՆԱՍՅԱ ԱՎԵՐԱԿՆԵՐԻ ԱՌՋԵՎ

Եվ մի՞թե, մի՞թե սիրտս ավերված
Ավերակներիդ լուռ պիտի պարզեմ,
Քո տեղ փայփայեմ ատվերդ մեռած,
Քո սուրբ խոսքի տեղ իմ լացը
լսեմ...

բեկորները։ Փրկչի եկեղեցի... ուղիղ մեջտեղից բանդված է, կարծես դիտմամբ են արել։ Տիգրան Հոնենցի եկեղեցի... պատերից բազմաթիվ քարեր են թափվել ու այդպես էլ մնացել... Աշոտաշեն ու Սմբատաշեն պարիսպներն էլ են կիսավեր, հրաձգ էլ են հոգնել մենավոր բաղաքի լռությունից, ասես պատմել են ուզում Անիի դարավոր վիշտը...

Ինչո՞ւ համաձայնվեցի տեսնել Անին, ի՞նչն իմ բերեց այստեղ...

ՍԳԱՎՈՐ ՔԱՂԱՔ... վիրավոր ու իմ խեղճ Անի... որքան են լացել Ֆո քարերը, որքան արցունք ես տեսել։ Երեխային կորցրած հարազատ մոր պես սգում ես ցավ ու ցրիվ եղած բեկորների համար, «սպասում հրաձց վերադարձին»...

Ո՞ւր են Ֆո չհնաղ տաճարներն ու պալատները, հրաշակերտ շինությունները։ Դարերի տառապանքը խտացել է ավերակ պատերիդ ներսում ու այդ խտացումից այսօր արյուն ու արցունք է գալիս աներևակայելի...

ՀԱՅՈՑ ԵՐԵՒՄՆԻ ՔԱՂԱՔԱՄԱՅՐ... Քանդված ու կիսավեր, արյունոտ ու արցունքոտ, հոգնած ու խեղճ։ Այսպես ներկայացար դու ինձ իմ հեռավոր ու մոտիկ Անի...

Հեռադիտակով նայելիս թվում է, թե մի բանի հայլ է մնում մինչև Անի, թվում է, թե ուր որ է կշրջեմ այս փլատակների մեջ, ներս կմտնեմ, ձեռով կշոշափեմ Մայր տաճարի այուհազարդ պատերը, կխոնարհվեմ նրա հազարամյա կամարների առջև ու լուռ կմրմնջամ.

Եվ մի՞թե, մի՞թե սիրտս ավերված
Ավերակներիդ լուռ պիտի պարզեմ,
Քո տեղ փայփայեմ ատվերդ մեռած,
Քո սուրբ խոսքի տեղ իմ լացը
լսեմ...

... Փշալարե՞ր, սահմա՞ն... ուրեմն խաբեց ինձ հեռադիտակը, մի՞թե խոշորացնող ապակին էլ է բնդունակ խաբելու։ Ուրեմն ես...

Երանի ձեռս չառնեի հեռադիտակը, երանի անհագ կարոտ մնար ինձ համար մենավոր ու լքված բաղաքը... ա՞ն այդ բարերը, լուռ վկաները մահվան ու արյունի...

Իրիկնամուտ է, արդեն պահն է մոտենում ժամերգության ու թվում է, թե ինձ պիտի դիմավորի հոգնած ու հինավուրց Մայր տաճարը, պիտի ճնշի Հայոց «Սուրբ-սուրբը» ու նրա աստվածային ճնշյունները կաթիլ առ կաթիլ պիտի հոսեն ափիցափ, զարկվեն բարերին ու ջերմացնեն նրա մենավոր հազարամյա կամարները...

ԲԱԲԿԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԹՎԵՐՈՒՄ ԵՎ ՓԱՍՏԵՐՈՒՄ

● *1979 թվականին մեկ օրվա ընթացքում Սովետական Հայաստանում արտադրվել է՝*

33214 հազար կիլովատժամ էլեկտրաէներգիա,

980 տոննա հանքային պարարտանյութեր,

35 հազար զույգ կաշվե կոշիկ, 13,7 հազար կենցաղային ժամացույց,

25,3 հազար դեկալիտր խաղողի գինի,

3,30 հազար դեկալիտր կոնյակ։

● *1979 թվականին հանրապետությունում մեկ օրում ստացվել, առաքվել և հաղորդվել է 1234 հազար թերթ ամսագիր, ծանրոց, դրամական փոխադրում, կենսաթոշակի մնարում, հեռագիր, միջքաղաքային հեռախոսային խոսակցություն։*

● *1979 թվականին մեր հանրապետությունում մեկ օրում արտադրվել է 1,3 անգամ ավելի արդյունաբերական արտադրանք, քան նախասովետական Հայաստանում 1913 թվականին, 4,6 անգամ ավելի, քան 1919 թվականին։*

● *1979 թվականին մեկ օրում արտադրվել է այնքան էլեկտրաէներգիա, որի արտադրության համար 1913 թվականին կպահանջվեր 6,5 տարի։*

● *1979 թվականին հանրապետությունում կար 12269 գիտական աշխատող (ներառյալ բուհերի գիտամանկավարժական կադրերը), այդ թվում՝ 701 գիտությունների դոկտոր, 5515 գիտությունների թեկնածու։*

● *Ցերեկային դպրոցներին դուգահեռ գործում են 17 երեկոյան և հեռակա դպրոցներ։ Հանրապետությունն ունի նաև 17 գիշերօթիկ և 28 հատուկ դպրոցներ։*

● *10 հազար բնակչին ընկնող ուսանողների թվով միութենական հանրապետությունների մեջ Հայաստանը գրավում է 3-րդ տեղը՝ ՌՍՖՍՀ-ից և Լիտվայից հետո։*

ՆՇԱՆԱՎՈՐ ՄԱՐԴԻԿ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ


Հայաստան այցելելով ես հատկապես ցանկանում էի ծանոթանալ Համբարձումյանի և Ալիխանյանի աշխատանքներին. և այն, ինչ գտա այստեղ՝ հմայիչ էր։ Տպավորիչ էին պատմական հուշարձանները՝ Էջմիածնի մայր տաճարը և Զվարթնոցի ավերակները։ Դառնին պետք է ճարտարապետական եզակի կոթող համարել ամբողջ աշխարհում։

Երբ Երևանի վերակառուցումն ավարտվի՝ նա կդառնա աշխարհի գեղեցկագույն և իր ազգային ճարտարապետական ոճով ինքնատիպ քաղաքներից մեկը։

ՄԻՏՉԵԼ ՈՒԻԼՍՈՆ
Ամերիկացի գրող, ֆիզիկոս

Լեռների մեջ ընկած իր գիրքով և յուրահատուկ կոմպոզիցիայով Երևանը հիշեցնում է Ցյուրիխը։ Դուք իրավունք ունեք պարտառանալու ձեր մայրաքաղաքով, նրա կենտրոնական հրապարակով, որ կրում է Լենինի անունը, և պողոտաներով, որոնք այդ հրապարակից ճառագայթաձև ելուզավորվում են տարբեր ուղղություններով։ Դուք ունեք հիանալի կամուրջներ, գեղատեսիլ ձորեր ու վեհաշուք, սրընթաց գետեր և այս ամենը, ինչպես որ Շվեյցարիայում, կարելի է տեսնել առանց Երևանից դուրս գալու։

ՖՐԻԴՐԻԽ ԴՅՈՒՐԵՆՄԱՔ
Շվեյցարացի գրող, թատերագետ



Армения в цифрах и фактах

● Валовая продукция промышленности Армении выросла в 1979 году по сравнению с 1913 годом в 361,8 раза, в том числе производство средств производства—в 732,9 раза, предметов потребления — в 167,1 раза.

● Валовая продукция сельского хозяйства выросла за этот период в 7,7 раза.

● Сельское хозяйство Армении в 1940 году имело 1555 тракторов, в 1979 году—12818; зерноуборочных комбайнов соответственно—288 и 1477; грузовых автомобилей—1007 и 15314.

● Производственный национальный доход в 1979 году вырос по сравнению с 1960 годом на 459,5 процента.

● За 1929—1979 гг. высшие и средние учебные заведения республики подготовили 419,6 тысячи специалистов. Ныне на тысячу человек, проживающих в Армении, приходится 713 человек с высшим и средним образованием.

● В 1940 году в Армении насчитывалось 96 больничных учреждений и 268 медицинских учреждений, оказывающих населению амбулаторно - поликлиническую помощь. В 1979 году соответственно — 174 и 466.

● В 1965 году в республике действовало 2673 коллектива физкультуры, объединявших 350,3 тысячи физкультурников. В 1979 году соответственно—3113 и 671,5. Стадионов в 1940 году было 2, в 1979 году—23, волейбольных, баскетбольных и теннисных площадок соответственно—236 и 959.

● По данным на 1979 г. в республике действуют 1219 клубных учреждений, 9839 массовых библиотек, насчитывающих около 20 миллионов экземпляров книг и журналов, работают 43 музея, 14 театров, 832 киноустановки.

Мелодия

На горе крепость и церковь Хор-Вирап, которым уже не одно столетие. Таинственно и гордо стоят стены крепости. Умелые руки наших предков кажется вышивали эти огромные камни. Они молча встречают людей и провожают.

И так любимо все, все—эти старые, разрушенные стены крепости, и эти камни, и темные комнаты, где летом веет прохладой, и эта церковь, вещающая всему миру, что так будет стоять вечно, чтобы рассказывать потомкам многое!.. многое!.. о своем народе... о прошлом...

Стояла у ворот. Грусть этих серых и холодных стен наполняла душу.

Рядом стоит старик, смотрит на Аракса. О чем думает этот старик?.. О чем мечтает?.. А может быть, он думает, что через несколько столетий удивятся люди, узнав, что когда-то в мире была война. что безжалостно резали, убивали, что даже в двадцатом веке в людях еще дремал первобытный дикий зверь... А может быть, он вспомнил свою юность?.. или мать?.. или?.. Может быть!..

— Откуда вы, дедушка?

Вопрос, наверно, показался ему странным. Он долго смотрел на меня. Не понял, что ли?..

— Из Игдира!.. Смотрит отсутствующим взглядом. И вот задвигались его губы:

— Из Игдирского села Зор,—посмотрел на Арарата,—что за село было наш Зора-сурб!..

убитой

— Не забыли?..

— Нет, доченька! Разве легко забыть детство, юность, можно забыть?..

Не знаю, для того, чтобы он заговорил, или просто так сказала:

— Сколько лет прошло!..

— Много!.. Ну что годы? Прошлое не забыть! Здесь всегда тоска,—он показал грудь,— и воспоминания! Дом с земляной крышей, а во дворе тополь, старые стены, покрытые мхом, почерневшая торня, меланхолично поющие колокола церкви... А юншоа сидит во дворе, в руке лаваш с сыром. Отец чинит сошник запашника и поет:

— О!.. О!.. оровел!..

Потом звенят церковные колокола, песня сливается с криками малышей, женщин. Юноша бросает кусок лаваша с сыром и бежит, не зная куда...

Вечер. Грустно звенят колокола, юноша глотает слезы. Мать и бабушка плачут. Отцовскую песню убили...

Старик молчал. Видно, трудно говорить!

— Знаешь, доченька, не так уж далеко наше село, вон там, за Араратом. Пешком можно дойти...,—голос дрожит у него,—может быть осталось село, может быть до сих пор стоит дом и тополь во дворе. И все как

песни

раньше... живут, работают... Только, наверно, не говорят на армянском. Может быть, даже забыли, что на земле был 1915 год, 24 апреля... может быть, и помнят, но очень смутно...

Тяжело стало в душе. И дышать трудно. Как страшны воспоминания об убитой песне!..

А старик глотает слезы. Он повернулся. Не хочет, чтоб я видела...

Ушла, не сказав ничего. Но во мне остались грусть старика и грустная мелодия убитой песни.

БИРЮЗА МЕЛИКСЕТЯН

Знаменитые люди об Армении

«Пройдет любовь, умрет краса,
Всему придет черед.
Для смерти смертный родился,
Деянье—не умрет!»

Ов. ТУМАНЯН

* * *

«Армяне пользутюся славой трехтысячелетних строителей. Но Ленин во сто крат умножил строительный талант армян. Красноречивое доказательство тому—республика Советской Армении, ее прекрасная столица».

Рокуэлл КЕНТ

* * *

«В своей жизни я не видел такого города, который рос так быстро, как Ереван. Меня поразили те колоссальные изменения, которые произошли здесь».

Джон ПРИСТЛИ

«Мне довелось побывать во многих городах мира, но я не знаю более красивого города, как Ереван».

Вильям САРОЯН

* * *

Мне, как поэту, особенно дорого искусство Армении. Помню, с особенной трепетностью я писал стихи о Мартиросе Сарьяне—он был общей гордостью всего нашего Кавказа. Кисть могучая, ясная, резкая, знающая настоящую цену вещам.

Расул ГАМЗАТОВ
Герой Социалистического Труда, лауреат Ленинской и Государственных премий, народный поэт Дагестана

Ашот ГРАШИ

АРМЕНИЯ

Армения, ты вся в напевах,
Ты и Поэт и Муза ты.
В твоей душе, как в листьях древа,
Румянятся слова-плоды.
По музыке, что с ветром слита,
Что слита с голосом полей,
Что слита с криком журавлей,
Армения, ты композитор.
По камню, что резьбу вознес
До самых звезд слепящих очи,
Армения—Каменотес,
Армения—великий Зодчий.
По цвету голубых озер,
По золотому цвету пожней,
По цвету скал, по цвету гор
Моя Армения—Художник.
Хочу сильней из год в год
Любить тебя, тобой гордиться,
Словами старца-летописца,
Что ты извечный Садовод.
А если б не было тебя:
Ни рек, ни гор, что выше грома,—
Я жизнь бы прожил не любя,
Без песен, без друзей, без дома.


●

Расул ГАМЗАТОВ

В КРАЮ АРМЯН

Хоть Арарат в краю армян
Верховый великан,
Там три вершины вровень с ним
Вздымаются вокруг:
То Аветик Исаакян и Мартирос Сарьян
И ты, Арам Хачатурян,—
Мой стародавний друг!
Хотя Севан в краю армян
Глубок, как океан,
Там есть три озера других,
Чьих не забыть заслуг:
То Аветик Исаакян и Мартирос Сарьян
И ты, Арам Хачатурян,—
Мой стародавний друг.

Номер, посвященный 60-летию Советской Армении, подготовлен литсотрудником редакции Б. Симоняном. Снимки А. Тер-Месропяна, В. Казаряна и А. Джереджяна.



ՋԱՐԵՆՑՅԱՆ ԹԵՄԱՆԵՐՈՎ

«ԳԱՆԳՐԱՀԵՐ ՏՂԱՑԻ» ԱՐՁԱՆԸ ՋԱՐԵՆՑԱՎԱՆՈՒՄ

Մեր ինստիտուտի աշխատակից Խաչիկ Միրիջանյանին ճանաչում են շատերը: Քանդակագործ, նկարիչ, նաև բանաստեղծ... Այս երեք ուղղություններն էլ նրա համար հարազատ ու սրտամոտ են, սակայն ինչպես իճին է խոստովանում ու ինչպես պարզ է դառնում նրա հետ առաջին իսկ ծանոթությունից, իր հույզերը Խ. Միրիջանյանը ավելի շատ արտահայտում է բանդակի միջոցով: Հենց վերջերս հայ մեծանուն բանաստեղծ Ե. Չարենցի անունը կրող բադամում հանդիսավոր պայմաններում բացվեց չարենցյան թեմաներով կատարված նրա «ԳԱՆԳՐԱՀԵՐ ՏՂԱՆ» բրոնզաձույլ արձանը:

Լսո՞ւմ ես, այնտեղ իմ սիրտն է թաղված,—
Կոխոտի՛ր նրան քայլերով քո լուսե,
Օ՜, դու, գալիքի գանգրահեր տղա,
Մեր յավ գալիքի ոսկեհեր մանուկ...

(Ե. ՉԱՐԵՆՑ)

Ոսկեհեր մանկան ութ մետրանոց մոնումենտը շատ հոգսեր ու անհուն գիշերներ պատճառեց շնորհալի քանդակագործ Խ. Միրիջանյանին: 1978 թվականի հունիսից մինչև հոկտեմբեր նա ստեղծեց շուրջ մեկ տասնյակի հասնող էսքիզներ, որոնցից ընտրեց ամենահաջողվածը: Հետո ակտիվ մասնակցություն Չարենցավանի կենտրոնածույլ ձույարաններում կատարվող աշխատանքներին: 40 սանտիմետր էսքիզից պատրաստվեց երկու մետրանոց մոդելը, որը մեծացվեց, դարձավ 8 մետր և տարի




ու կես տևած դժվար ու լարված աշխատանքից հետո վերջապես բարձրացավ պատվանդանին:

... Ու տասնամյակներ անց եկավ նա, այդ գանգրահեր տղան... եկավ արևի ճառագայթ դարձած... պարզեց ձեռքերը դեպի տիեզերք, աչքերը հառեց կապույտ անհունին ու սյացքն ուղղեց դեպի ազատ հեռուներ...

Նայում են անցուդարձերը «Վերածննդի» համալիրի կենտրոնում վեր խոյացող Ե. Չարենցի ու Խ. Միրիջանյանի «Գանգրահեր տղային», խորհում են մի պահ ու շարունակում իրենց ճանապարհը:

Մ. ՓԻՐՈՒԶԱ



Եկել եմ ահա, եկել եմ հեզ մոտ
Տասնամյակներ անց պատվիրաններդ կատակած օրից,
Հիմա էլ ինքդ լսո՞ւմ ես, պոետ, հիշո՞ւմ ես դու ինձ,
Ես եմ՝ ձո երկնած գանգրահեր տղան,
Հենց այն պատանին, որին տվեցիր առաքելություն
Իրագործելու պատգամներդ ողջ,
Լինելու հաև Նաիրյան երկրիդ վերածննդի
մշտարթուն վկան:
Եկել եմ ահա ավետելու ինձ հաղթությունը մեր,
Հրամցնելու փառավոր ուղին, լուսաշող ներկան,
Եկել եմ սիրով, որ ձո անունը կրող բաղաքում,
Ու ձո Նաիրյան ողջ ժողովրդի սրտաբուխ կամքով,
Քո փառքի համար դառնում ես ինքդ մի նոր
հուշարձան.
Եկել եմ ահա, որ հետնորդներիդ նորահոր եռանդ,
Նորահոր ջուրջ տամ,
Իմ կայտառությամբ, իմ նոր սյացքով
Ու չծերացող իմ մանկությունով դառնում նոր խրան:

ԽԱՉԻԿ ՄԻՐԻՋԱՆՅԱՆ

ՀԱՑ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ

Աշխատանքային, ստեղծագործական մեծ խանդավառությամբ է հայ ժողովուրդը տոնում իր բերկրալից տոնը՝ Հայաստանում սովետական իշխանության հաստատման և Հայաստանի կոմկուսի կազմավորման 60-ամյակը: Այդ մեծ հոբելյանը արժանավայել նվերներով են նշանավորում նաև հանրապետության կուլտուրայի բնագավառի աշխատողները:

Նոյեմբերի 25-ին Երևանի նկարչի տանը հանդիսավոր պայմաններում բացվեց Հայաստանի նկարիչների րստեղծագործությունների հանրապետական հոբելյանական ցուցահանդեսը:

Հայաստանի նկարիչների միության վարչության նախագահ, Հայկական ՍՍՀ ժողովրդական նկարիչ Ս. Սաֆարյանը, դիմելով ներկաներին, նշեց, որ ցուցահանդեսն ընդգրկում է սովետահայ նկարիչների բոլոր սերունդների ներկայացուցիչների մի քանի հարյուր աշխատանքները, րստ որում ավագների հետ բազմաթիվ հետաքրքրական գործեր է ներկայացրել երիտասարդությունը:

Սովետահայ նկարիչների վերջին երեք տարում ստեղծած այդ գործերը պատկերում են հայ ժողովրդի հեղափոխական անցյալի հերոսական դրվագները, դարաշրջանի հերոսները, ազատագրված հայ մարդու հերոսական աշխատանքը:

Ցուցահանդեսի բացման առթիվ ողջույնի խոսք ասացին Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրի առաջին տեղակալ Մ. Խարազյանը, ՍՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ, սոցիալիստական աշխատանքի հերոս, ՍՍՀՄ ժողովրդական նկարիչ Դ. Նալբանդյանը:

Այնուհետև ներկաները դիտեցին ցուցադրությունը՝ գեղանկարչություն, քանդակագործություն, կիրառական արվեստ:

Նույն օրը Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրության նորաստեղծ ցուցահանդեսային սրահներում բացվեց նույն հոբելյանական ցուցահանդեսի գրաֆիկայի, պլակատի և թատերական արվեստի բաժինը:

Հոբելյանական ցուցահանդեսի բացմանը ներկա էին ՀԿԿ կենտկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչ Ա. Մկրտչյանը, Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստր Գ. Առաքելյանը, ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի մշտական ներկայացուցիչ Ս. Մելքումյանը, ՀԿԿ կենտկոմի կուլտուրայի բաժնի վարիչի տեղակալ Թ. Պապյանը:



Հայաստանում սովետական կարգերի հաստատման 60-ամյակի առթիվ ինստիտուտում տեղի ունեցավ հանդիսավոր նիստ և գեղարվեստական մաս: Նորից ինստիտուտ էր հրավիրվել սիրված ու ճանաչված ասմունքող Սիրվարդ Մեսրոպյանը:

Ինստիտուտի փոքր դահլիճում հավաքված դասախոսները, ուսանողները և աշխատողները ջերմորեն դիմավորեցին ասմունքողին:

Բացման խոսքով հանդես եկավ մշակույթի համայսրանի ռեկտոր Ս. Զաքարյանը: Նա համառոտակի պատմեց Սիրվարդ Մեսրոպյանի ասմունքային արվեստի բարձր մակարդակի, հայ բանաստեղծների ստեղծագործությունների վարպետ կատարման մասին:

Այնուհետև խոսեց ինքը՝ ասմունքողը: Հակիրճ նյութից հետո Սիրվարդ Մեսրոպյանը հատվածներ արտասանեց Հովհաննես Շիրազի «Անի» պոեմից, Վարդգես Պետրոսյանի «Հայկական էսքիզներ» գրքից, Համո Սահյանի, Ալիսիա Կիրակոսյանի, Հովհաննես Գրիգորյանի բանաստեղծություններից:

Դժվար էր թողնել դահլիճը: Բանաստեղծությունները, ասմունքողի վարպետ կատարումները համակել էին բոլորի սրտերը: Ունկնդիրները շնորհակալություն հայտնեցին և ջերմ ծափահարություններով վարձատրեցին Սիրվարդ Մեսրոպյանի կատարումները:

ՍԻՐՎԱՐԴ ՄԵՍՐՈՊՅԱՆԸ ՄԵՐ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ

ՆՈՐ ԳՐՔԵՐ

ՀՈԿՏԵՄԲԵՐԸ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Լենին Վ. Ի. Նամակ Շահումյանին.— Երևեր, 4-րդ հրատ., հ. 19, էջ 623—627:

Լենին Վ. Ի. Հեռագիր Օրջոնիկիձեին: (1921 թ. 9 ապրիլի: Սովետ. Հայաստանին օգնություն ցույց տալու մասին).— Երևեր, 4-րդ հրատ., հ. 19, էջ 623:

Ալիխանյան Ս. Տ. Հայկական գործերի կոմիսարիատը Հոկտեմբերյան հեղափոխության պրոպագանդիստը: Եր., ՀՍՍՀ Գիտելիք բրկ. 1977, 43 էջ:

Փերիխանյան Գ. Մ. Այգաբաց: (Հուշեր Անդրկովկասի բաղաքաց. կոիվների և Հայաստանում սովետական կարգերի հաստատելու մասին).— Եր., Հայաստան, 1970, 195 էջ:

ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՋԱՐԳԱՑՈՒՄԸ

Աբղուումանյան Մ. Ջ. Արհավիրից վերածնունդ.—Եր., Հայաստան, 1973, 582 էջ:

Ավագյան Գ. Սովետական Հայաստանի գյուղատնտեսությունը.— Եր., համալս. 1970, 393 էջ:

Կարապետյան Հ. Ն. Սոցիալիզմի անցման մի քանի տնտեսական յուրօրինակություններ Սովետական Հայաստանում.— Եր., ՀՍՍՀ Գիտ. բրկ., 1976, 50 էջ:

Հայաստանի հեղափոխական շարժումների և բոլշևիկների կազմակերպությունների պատմությանը նվիրված գրականություն (1922—1977 թթ.).— Եր., 1978, 64 էջ): ՀՍՍՀ Կովկասի ԿԿ կազմ. ինստ.-ում: ՍՄԿԿ ԿԿ մարքսիզմ-լենինիզմի ինստ. ֆիլիալ: ՀՍՍՀ ԳԱ հասարակ. գիտ. ինֆորմ, բյուլետեն. Բ. մատենաշար):

Մելքումյան Ս. Հայկական ՍՍՀ տնտեսական կապերը.— Հայաստան, 1973, 170 էջ:

Խմբագիր՝ Լ. Ա. ԱԼՈՅԱՆ
Редактор: АЛОЯН Л. А.

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ, ԵՐԵՎԱՆ, ՏԵՐՅԱՆ Փ. № 74, ՀԵՌԱԽՈՍ՝ 58—37—11:
ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 2 տպարան, Երևան, Տերյան 44:
Պատվեր 1408 տպաքանակ 1500
ՎՖ 01786
Типография № 2 Госкомитета по делам издательства, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван, ул. Теряна, 44.